# ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ

## ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐ

Քսանութ անդամ երկրներ իրենց լուման են ներդնում՝ ղիվանագիտական, քաղաքական և ռազմական ճանապարհով անվտանգությանը և կայունությանը նպաստելու գործում: Նրանք գործում են կոլեկտիվ պաշտպանության սկզբունքով, որի համաձայն ՆԱՏՕ-ի մեկ կամ ավել անդամների վրա հարձակումը նշանակում է նրանց բոլորի վրա հարձակում: ՆԱՏՕ-ն նաև հաստատում է գործընկերություն ՆԱՏՕ-ի ոչ անդամ երկրների հետ և ընդգրկված է ճգնաժամի կառավարման գործընթացների և առաքելությունների մեջ:

## ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐ

Գործընկերությունը ՆԱՏՕ-ի ոչ անդամ երկրների հետ սկսվել է դեռևս 1991 թվականից: Նրա նպատակն է կարևոր ժողովրդավարական միջավայրի կառուցման հարցում ներառնակա երկրներին օգնության ցուցաբերումը՝ քաղաքական կայունության պահպանման և զինված ուժերի արդիականացման մեջ: Անվտանգության հարցերի հետ կապված երկխոսություններ անց են կացվում բազմակողմանի ներկայացուցչական ժողովի ժամանակ, որը կոչվում է Եվրատլանտյան խորհուրդ: Գործնական համագործակցությունը առնատական գործընկեր երկրների հետ իրականացվում է ՆԱՏՕ-ի Գործընկերություն խաղաղության համար ծրագրի միջոցով: ՆԱՏՕ-ն նաև պահպանում է առանձնահատուկ հարաբերություններ Ռուսաստանի և Ուկրաինայի հետ:

## ՍԻԶԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Այս երկրները մասնակցում են ՆԱՏՕ-ի անվտանգության հետ կապված երկխոսությունների մեջ, որպեսզի բարելավեն փոխըմբռնումը և խորացված գործնական համագործակցության միջոցով իրենց լուման ներդնեն տարածաշրջանային անվտանգության մեջ: Ներկայումս նրա մեջ մտնում է յոթ երկիր, որոնք կարող են կոլեկտիվ և անհատական եղանակով անցնել խորհրդատվություններ ՆԱՏՕ-ի հետ:

© MoD Canada

© MoD Canada

## ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Այս նախաձեռնությունը Մերձավոր Արևելքի տարածաշրջանի երկրներին առաջարկում է համագործակցություն՝ կապված ՆԱՏՕ-ի հետ գործնական երկկողմ անվտանգության հարցերի հետ, որպեսզի իրենց լուման ներդնեն գլոբալ և տարածաշրջանային անվտանգության մեջ: Ներկայումս նրանում անդամագրված է չորս երկիր:

[1]Թուրքիան ճանաչում է Մակեդոնիայի Հանրապետությունը իր սահմանադրական անվանմամբ
[2]Իսրայելի պնտությունն իր մայրաքաղաք է հայտարարել Երուսաղեմը: ՄԱԿ-ի զիջրթռրումը, կապված Երուսաղեմի հարցի հետ, տրված է Գլխավոր վեհաժողովի և Անվտանգության խորհրդի այս հարցի հետ կապված մի քանի բանաձևում

Այս քարտեզի վրա ցույց տրված սահմանները, անվանումները և նշումները նկատի չունեն ՆԱՏՕ-ի կողմից պաշտոնապես նրանց աջակցություն և ճանաչում

www.nato.int